112. Գրասան նախագավթի պատին

(Լուս. № 69)

Հ ՊԵ Մ 1356

Հրատարակված է՝ Ջալ 26, Դրիմ 65, Վիմ 248

Նկ. 69. Արձ. № 112:

1 *Ի թվ. ՊԵ։*

2 *Կամաւն Այ ես՝ Սամսար վդ*

3 *միաբանեցայ սբ Ածածնիս եւ*

4 *ետու Ա երծաթի խաչ ու այլ գրեանք,*

5 *որ զքաւասնից ժամն ինձ առնեն։ Կատար-*

6 *իչքն օհին յԱյ։*

Տարընթերցում.— *1.* Ջալ *չունի* Ի *թվ.* ՊԵ:

2. Դրիմ *երկրորդ տողում* Սամսար *կարդացել է* Սամաղար:

113. Գրասան նախագավթի հս պատին

(Լուս. № 70)

Հ ՉԺԳ Մ 1264

Հրատարակված է՝ Ջալ 26, Դրիմ 62, Վիմ 248

1 *Թւ. ՉԺԳ։*

2 *Մեծաւ յուսով սրբո*

3 *Ածածնիս հայրս Կիրա-*

4 *կոս առաջնորդ սբ ուխ-*

5 *տիս, աշակերտ եղբարցս ետու սբ ..[ք]շո-*

6 *ց, վեցկի, եւ մեծածախ զաւագան, Գ շրջա-*

7 *ռ եւ այլ արդիւնս։ Եւ խնդրեցի վդաց եղբար-*

8 *ցս զճողակաթի տաւնն զամէն եկե-ղեցիք-*

9 *ս։ Եւ կատարիչքն աւրհնին յԱյ։ Ով խափանէ՝*

10 *դատի ի տէ եւ նզով առցէ յԱյ։*



Նկ. 70. Արձ. № 113:

Ծանոթություն.— *1. Թվականը գրված է պատի քիվի վրա։*

2. Եկեղեցական սպասների հետ հիշատակված վեցկին ծանր արոր է երկաթե մեծ խոփով։